

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2014 թ-ի համայնքի ղեկավարի տարեկան

Համայնքի համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողական՝ 2014թվականի տարեկան կտրվածքով. առ. 01.01.2014-01.01.2015թ.

Եկամուտների տեսակը	տարեկան պլան	տարեկան կատարողական
Աճուրդի մասնակցության գումար	120,0	32,0
Հողի հարկ	8958,2	8958,7
Գույքահարկ	3070,0	3072,7
Վարձակալական վ/վ	2190,8	2229,6
Դոտացիա	48076,0	48076,0
Տեղական տուրքեր	120,0	31,7
Դրամաշնորհ	4334,0	4334,0
Տեղական վճարներ	3183,0	546,0
Ընդամենը վարչական բյուջե	70052,0	67280,7

Վարչական բյուջեի ծախսեր.

Արմավիրի գյուղապետարանը 2014 թվականի տարեկան կտրվածքով կատարել է հետևյալ ծախսերը:

- 1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 23564,2 հազ.դրամ
- 2.Անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 6000,0 հազ.դրամ
- 3.Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 17937,0 հազ.դրամ
- 4.Մանկապարտեզ 6940,0 հազ.դրամ
- 5.Արվեստի դպրոց 13403,8 հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի տարեկան պլան 27626,1 հազ.դրամ

տարեկան կատարողական 5816,5 հազ.դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

 **Ռ.Ֆ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը՝ կայացած 23.01.2015 թ-ին. ժամը 14.00-ին

Նախագահությամբ՝

Ռ.Մարգարյանի

քարտուղարությամբ՝

Գ.Հովհաննիսյանի

մասնակցությամբ՝

Արմավիրի մարզպետարանի գյուղվարչության գյուղատնտեսության և

բնապահպանության բաժնի պետ՝ Ռ. Սարիբեկյանի

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու զեկուցմանը ներկա են գտնվում համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմը, համայնքի հիմնարկ-ծեռնարկությունների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև համայնքի մոտ 35 բնակիչներ:

Լսեցին - Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյանի 2014 թվականի տարեկան հաշվետու զեկույցը:

Պարոն Ռ.Մարգարյանը հաշվետու զեկույցում ներկայացրեց 2014թ. ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականը, ինչպես նաև համայնքին վերաբերվող այլ հիմնախնդիրներ:

2013թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտից և 2014թվականի ցրտահարությունից տուժած համայնքի գյուղացիական տնտեսությունների ստացած եկամուտը ցածր է, ինչի հետևանքով դժվարությամբ է գանձվում ոռոգման ջրի, վարձավճարը հողի հարկը և գույքահարկը: Սակայն չնայած այդ հանգամանքին բացառապես համայնքի միջոցներով շաբաթը երկու օր կատարվում է աղբահանություն, մի քանի անգամ հիմնովին մաքրվել է Արմավիր գյուղի գերեզման տանող ճանապարհի և Արմավիրից Արևիկ տանող ճանապարհի եզրերի աղբակույտերը:

Արմավիր համայնքի ենթակայության տակ են գտնվում՝ Արմավիրի մանկապարտեզը, Արվեստի դպրոցը Մշակույթի տունը ,և դասական ոճի ըմբշամարտի թիմը որոնք ֆինանսավորվում են համայնքի բյուջեից:

2014թվականին ոռոգման ջրի սակավության պատճառով համայնքի բյուջեի միջոցներով վերանորոգվեց մեկ խորքային հոր:

2014թվականի մայիս ամսից //Մեշա// կոչվող խորքային հորը աշխատեց ոռոգման տակ մինչև ոռոգման սեզոնի ավարտը:

Քանի որ 2014թվականը ոռոգման առումով սակավաջուր տարի էր գյուղապետարանի կողմից շահագործվող // Պարկի մեջ// կոչվող խորքային հորը, որը մատակարարում է խմելու ջուր՝ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին հարկադրաբար օգտագործվեց ոռոգման նպատակով :

Հորի հեռավորությունը ոռոգվող հողատարածքներից կազմում է շուրջ երկու կիլոմետր ինչի հետևանքով ավելի մեծացան հորի շահագործման համար ծախսված էլեկտրոէներգյան:

Համայնքի ղեկավար պարոն Ռ. Մարգարյանը նշեց, որ ժամանակին դիմել է //Մերձափնյա// ԶՕԸ-ի տնօրինությանը, ինչպես նաև մարզպետարան միջնորդելու, որ ոռոգման ժամանակահատվածում վերը նշված երկու խորքային հորերը սպասարկվեն ԶՕԸ-ի կողմից բայց ապարդյուն:

Արդյունքում գոյացավ 4 000,0 դրամի դեֆիցիտ որը լրացնելու նպատակով համայնքը հարկադրված դիմեց ՀՀ կառավարությանը թույլատրելու փոխադրել համայնքի բյուջեյի ֆոնդային մասից վարչական հաշիվ 4 000.0 դրամ:

ՀՀ կառավարության 02.10.2014 թվ-ի թիվ 1078-Ա որոշման հիման վրա բյուջեյի ֆոնդային մասից հատկացում արվեց վարչական մասին 4.000.0 դրամ էլեկտրաէներգիայի պարտքը փակելու համար:

Ըստ որոշման այդ գումարը վերադարձվելու էր ֆոնդային բյուջե մինչ 2014թվականի դեկտեմբերի 24-ը, բայց ջրօգտագործողների կողմից ստացված ջրի դիմաց թերի վճարումների պատճառով ֆոնդային բյուջե վերադարձվեց 1.256.0 դրամ այսինքն 2 743,7հազ.դրամի չափով ֆոնդային բյուջե պակաս փոխանցվեց: Չնայած, որ հողի հարկի գույքահարկի և հողի վարձավճարների առումով համայնքի բյուջեն կատարվեց 100%-ով:

2015թվականի բյուջեով կազմել ենք ժամանակացույց 6 ամսվա ընթացքում, այդ գումարը վերադարձնելու ֆոնդային բյուջե:

Համայնքի ղեկավար Ռ.Մարգարյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեց համայնքի բնակիչ՝ Գևորգ Կարսպետյանը, որը նշեց, որ 2014թվականին ոռոգման ջրի սակավության և երաշտի հետ մեկտեղ, համայնքի ղեկավար Ռ.Մարգարյանը ջանք ու եռանդ չխնայեց, որպեսզի գյուղացու բերքը չչորանա և իրացվի: պարոն Ռ.Մարգարյանին շնորհակալություն հայտնեց համայնքում բարեփոխումներ կատարելու համար, շեշտելով նաև համայնքի առաջնային հիմնախնդիրների առաջիկա տարվա ընթացքում իրականացումը:

Արտահայտվեցին նաև ավագանիներ՝ Թամարա Պողոսյանը և Իշխան Ազիզյանը, որոնք նշեցին, որ իրոք համայնքում կատարվել է մի շարք բարեփոխումներ, սակայն համայնքն ունի ցավոտ կողմեր դրանցից են՝

1. Խմելու ջրի ջրագծերի կապիտալ վերանորոգումը,
2. Մանկապարտեզի վերանորոգումը
3. Արմավիր գյուղի եկեղեցու կառուցումը,
4. Ոռոգման համար 4 խորքային հորերի վերականգնումը:

Այնուհետև ելույթ ունեցավ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ռ. Սարիբեկյանը՝ որը առաջարկեց համայնքի բնակիչներին, ակտիվություն ցուցաբերել սեփական մուտքերի՝ հողի հարկի, գույքահարկի, ջրի վարձավճարների հավաքագրման գործընթացին, ինչը կնպաստի բյուջեի կատարմանը և համայնքի առաջ ծառայած խնդիրների լուծմանը :

Ռ. Սարիբեկյանի կողմից համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը գնահատվեց դրական:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

Քարտուղար՝

Գ.Ս.Գովհաննիսյան